ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան

10 հոկտեմբերի 2024թ.
ժամը 14^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝

Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության տնտեսական բաժնի պետ՝ Ռ. Արշակյան,

Հանձնաժողովի անդամներ՝

Կոմիտեի պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Մկրտչյան,

Կոմիտեի պետական մասնակցությամբ ընկերությունների կառավարման և մոնիտորինգի բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Քոչարյան,

Կոմիտեի պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության պետական գույքի մշտադիտարկման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Բոյաջյան,

Կոմիտեի իրավական ապահովման և դատական ներկայացուցչության բաժնի գլխավոր իրավաբան՝ Է. Պողոսյան:

Հանձնաժողովի քարտուղար՝

Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Գևորգյան:

Նիստի ընթացքում **«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների նախահաշվային գները:

«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
2. «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխանության, տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:
3. Տվյալներ «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգին էլեկտրոնային հայտեր ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
4. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին:
5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

1. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:

1.1 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականի հոկտեմբերի 7-ը ժամը 12^{00}-ը, հետադարձ աճուրդը կայացել է 2024 թվականի հոկտեմբերի 8-ին ժամը 12^{00}-ին:

1.2 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային eauction.armeps.am համակարգի միջոցով բացվել են սահմանված ժամկետում:

1.3 Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտերը, որոնք ընդունվել են eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել է հետագա գնահատման համար ընդունելի 6-ն է:

1.4 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի շրջանակներում հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

գ.	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցե
1	ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	Ք. Երևան, Խորենացի փ., 72/12$_2$	h_davo@mail.ru
2	Փրիթի Ուեյ ՍՊԸ	Ք. Երևան, Ծովակալ Իսակովի 48/1	B2bvesta@gmail.com
3	Արամ Խաչատրյան Սասունի ԱՁ	ք. Երևան, Արամ Խաչատրյան 12/7 տուն	arkhachatryan84@gmail.com
4	Արեալ Շոփ ՍՊԸ	ք. Երևան, Խանջյան 7, բն.51	armengabrielyan1@gmail.com
5	ԼԻԴ ՄԵՉ ՍՊԸ	ք. Երևան, Ավան Բաբաջանյան 7/1	lidmech@bk.ru
6	Նարեկ Յուրիկի Կոստանյան ԱՁ	ք Երևան,Նիկոլ-Դուման 51$_2$ 11բն	Kostnar@yahoo.com

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:

2. «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15» ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխանության, տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:

2.1 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15» ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգի Մասնակիցների էլեկտրոնային հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ-ի կողմից ներկայացված իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը ներկայացված է 2023 թվականինը և ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չափորոշիչները հստակեցված չեն:
Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի մասնակիցների առաջարկած գները.

Հ/Հ	Հբ. տեղ	Ներկայացված հայտեր	Նախ. գին	Գնային առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	1 350 000	718 000	20%	861 600
1	2	Փրիթի Ուեյ ՍՊԸ	1 350 000	951 300	20%	1 141 560
1	3	Արամ Խաչատրյան Սասունի ԱՁ	1 350 000	963 057	20%	1 155 668,4
1	4	Արեալ Շոփ ՍՊԸ	1 350 000	1 020 000	20%	1 224 000
1	5	ԼԻԴ ՄԵՉ ՍՊԸ	1 350 000	1 067 600	20%	1 281 120
1	6	Նարեկ Յուրիկի Կոստանյան ԱՁ	1 350 000	1 348 000	0%	1 348 000

4. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին:

4.1 «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով սույն արձանագրության 2.1 կետը և հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 41-րդ կետը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև նիստի կասեցման ավարտը

շտկել անհամապատասխանությունները, հակառակ դեպքում մերժել վերը նշված մասնակցի հայտերը հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 42-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին:

5.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել 14.10.2024թ.:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Արշակյան .....

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մկրտչյան .....

Ա. Քոչարյան .....

Գ. Բոյաջյան .....

Է. Պողոսյան .....

Քարտուղար՝ Լ. Գևորգյան .....